

# Հայ գրականության, նրա դասավանդման մեթոդիկայի

## և լրագրության ամբիոն

### Դասախոս

Դասախոսի Անուն, Ազգանուն

Անահիտ Ալբերտի Նորիկյան

Ծննդյան վայրը, տարեթիվը

1964թ., փետրվարի 23, Լենինական

Կրթությունը

Բարձրագույն

Սովորել և գերազանցությամբ ավարտել է Գյումրու թիվ 4 միջնակարգ դպրոցը:

1982-86թ.թ. սովորել և կարմիր դիպլոմով ավարտել է Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի պատմաբանասիրական ֆակուլտետը:

### Աշխատանքային փորձ

1989 թվականից աշխատում է քաղաքային <<Բանվոր>> թերթի խմբագրությունում, սկզբում որպես նամակների բաժնի գրական աշխատող, ապա՝ բաժնի վարիչ: 1995 թ.-ից ստանձնել է <<Կումայրի-Բանվոր >> ՍՊԸ-ի գլխավոր խմբագրի տեղակալի, իսկ 2009 թ.-ից գլխավոր խմբագրի պարտականությունները:

1992 թվականից Հայաստանի ժուռնալիստների միության անդամ է:

1999 թվականից դասավանդում է Գյումրու Մ. Նալբանդյանի անվան մանկավարժական ինստիտուտում:

### Կարդացվող դասընթացներ

Ժուռնալիստական էթիկա, Լրագրային ժանրեր և ժուռնալիստիկայի ստեղծագործության հիմունքներ, Խմբագրական աշխատանք և թերթի ձևավորում, ԶԼՄ և լսարան, Մամուլի ազատության հիմնահարցեր, Էկոլոգիական ժուռնալիստիկա, Ժուռնալիստիկայի զարգացման միտումներ և ԶԼՄ-ի սոցիոլոգիա առարկաները:

### Վերջին հրատարակումները

<<Ժամանակակից հրապարակախոսության գործառույթներն ու հրապարակախոսական տեքստերի առանձնահատկությունները>> և <<Հրապարակախոսի կերպարի ձևավորումը և վարպետության չափանիշները>> թեմաներով գիտական հոդվածները տպագրվել են ԳՊՄԻ-ի գիտական նյութերի ժողովածուներում:

## **Մասնակցությունը դրամաշնորհներին**

Մասնակցել է արտասահմանյան տարբեր կազմակերպությունների մասնագիտական վերապատրաստման դասընթացներին, ինչպես նաև տարբեր դրամաշնորհների իրականացմանը:

2001թ. սեպտեմբերի 15-30-ը ԱՄՆ-ի <<Պրոմեդիա>> պրոֆեսիոնալ լրագրողների ժուռնալիստիկայի աջակցությամբ մրցութային կարգով հնարավորություն է ստացել մասնակցելու Շվեյցարիայում կայացած լրագրողների միջազգային կոնֆերանսին:

2003թ. մասնակցել է ԱՄՆ միջազգային հետազոտությունների զարգացման գործակալության (ԱՅՐԵՔՍ) հայտարարած <<Համայնքային կապեր>> մրցութային ծրագրին և հնարավորություն ստացել մեկամսյա վերապատրաստման մեկնել ԱՄՆ (Կալիֆորնիայի նահանգ, քաղաք Սակրամենտո <<Սակրամենտո համալսարան>>՝ կատարելագործելով լրագրողական փորձն ու հմտությունները:

## **Պարգևներ**

2007-2008թ.թ. ԳՊՄԻ-ի ղեկավարության կողմից բարեխիղճ աշխատանքի համար արժանացել է պատվոգրերի:

2009թ. բարձրագույն կրթության ոլորտում ներդրած ավանդի համար ՀՀ Շիրակի մարզպետի կողմից արժանացել է վաստակագրի:

2010թ.-ին ՀՀԿ նախագահ Սերժ Սարգսյանի կողմից պարգևատրվել է շնորհակալագրով:

**Անձնական տվյալներ /ընտանեկան դրությունը, հեռախոսահամար, ինտերնետային հասցե/**

Ամուսնացած չէ:

Հեռ.՝ 093 80-72-26,

Ինտերնետային հասցեն՝ [noriganahit@mail.ru](mailto:noriganahit@mail.ru) :